Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 11-ի N 1365 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՍՏՂԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ծրագրով սահմանվում են «Համաշխարհային աստղի հայաստանյան հյուրախաղեր» երաժշտական նախագծի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման բովանդակային և ֆինանսական շրջանակը, շահառուների ներգրավման և մասնակցության պայմանները:

2. Ծրագրի նպատակն է մշակութային կյանքի աշխուժացումը, հանրության լայն զանգվածների (ներառյալ խոցելի և թիրախային խմբերը) մասնակցության ապահովումը երաժշտական միջոցառմանը (այսուհետ՝ միջոցառում), համաշխարհային աստղերի ներկայացումը Հայաստանում, ինչպես նաև միջազգային ասպարեզում Հայաստանի ճանաչելիության բարձրացումը և մշակութային զբոսաշրջության զարգացումը:

3. Ծրագրի իրականացումը նպաստավոր պայմաններ կստեղծի ժամանակակից արվեստին հաղորդակցվելու համար:

4. Ծրագրի իրականացման պատասխանատու մարմինը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն է (այսուհետ՝ պետական մարմին):

5. Ծրագրի շրջանակներում իրականացվելու է 1 միջոցառում՝ համաշխարհային հայտնի հիփ-հոփ արտիստ Սնուպ Դոգ-ի (Snoop Dogg) մասնակցությամբ:

2. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԸ

6. Ծրագրի շահառուներն են Հայաստանի երաժշտասեր և ժամանցասեր հանրությունը, Հայաստանում գտնվող և, միջոցառմանը մասնակցելու նպատակով, Հայաստան ժամանած զբոսաշրջիկները:

7. Ծրագրի իրականացումն ապահովում է «Դոպինգ Սփեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ կազմակերպություն):

8. Կազմակերպությունը պարտավոր է ապահովել միջոցառման համար բոլոր անհրաժեշտ սարքավորումներով, իրականացնել դրանց տեղադրումը, ապահովել միջոցառման անցկացման թեմայով գովազդային արշավներ Հայաստանում և արտերկրում:

9. Կազմակերպությունը պարտավոր է բոլոր հնարավոր գովազդային արշավներում նշել, որ միջոցառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հովանու ներքո:

10. Կազմակերպությունը պետական մարմնին տեղեկատվություն կներկայացնի գովազդային արշավների արդյունքում միջոցառմանը մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թվի և վաճառված տոմսերի քանակի վերաբերյալ:

11. Միջոցառման իրականացման համար գնված գույքը (առկայության դեպքում) միջոցառման ավարտից հետո որպես սեփականություն հանձնվելու է պետական մարմնին կամ վերջինիս կողմից նշված այլ պետական կազմակերպության:

12. Միջոցառման իրականացման ընթացքում կազմակերպությունը կհամագործակցի հասարակական կարգը պահպանող, ինչպես նաև միջոցառման անվտանգությունն ապահովող պետական իրավապահ մարմինների և դրանց համապատասխան աշխատակիցների հետ:

3. ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

13. Միջոցառումը կիրականացվի 2023 թվականի սեպտեմբերի 23-ին՝ «Հրազդան» մարզադաշտում:

4. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

14. Ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը կազմակերպությանը կհատկացնի 2,318,596.8 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ միջոցառման իրականացման վերաբերյալ կազմակերպության և համապատասխան արտիստի միջև կնքված պայմանագրի ապացույցը (պայմանագրի օրինակը) և պահանջվող գումարի չափով բանկային երաշխիքը պետական մարմնին տրամադրելուց հետո:

15. Միջոցառման ավարտից և պետական մարմնի կողմից միջոցառման արդյունքն ամբողջությամբ ընդունվելուց հետո, կազմակերպությունը միանվագ վճարմամբ, Պետական բյուջե հետ կվճարի նվազագույնը 24,381.0 հազ. դրամ, որը կուղղվի մշակույթի ոլորտի ֆինանսավորմանը:

16. Կազմակերպությունը՝ միջոցառման ամբողջական պատշաճ կատարումից հետո, տրամադրված դրամաշնորհի ընդհանուր գումարից պակաս գումար ծախսվելու դեպքում, պարտավոր է տարբերությունը (տնտեսված գումարը) վերադարձնել Պետական բյուջե՝ միջոցառման արդյունքն ամբողջությամբ ընդունվելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

17. Շահառուների թիվը կկազմի 20000-25000 մարդ:

18. Ծրագրի շահառուներն են լինելու հանրության լայն զանգվածներ, այդ թվում՝ սոցիալապես խոցելի խմբեր:

19. Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ավելացնել Հայաստան ժամանող զբոսաշրջիկների թիվը, կնպաստի մշակութային զբոսաշրջության ծավալների և դեպի Հայաստան ֆինանսական հոսքերի ավելացմանը՝ հետևապես նաև տնտեսական աճին, կհանգեցնի երկրի վարկանիշի, ինչպես նաև Հայաստանի մասին իրազեկվածության բարձրացմանը:

20. Հայաստանը հնարավորություն կունենա մուտք գործելու միջազգային շոու-բիզնեսի շուկա, հավասար պայմաններ կստեղծվեն դաշտում ճանաչում ունեցող աստղերին Հայաստան ավելի մատչելի միջոցներով հրավիրելու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ